ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ համայնքի ղեկավարի 2019թվականի ընթացքում աշխատանքների մասին:

Հաշվետու ժողովը տեղի է ունեցել 2020թվականի փետրվարի 4-ին 14:00-ին համայնքապետարանում:

Հաշվետվությանը ներկա էին ավագանու անդամներ համայնքապետարանի աշխատակազմը ,<<Նորապատի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցներ,համայնքի բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա.Ղուկասյանը:

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյանը, որն իր աշխատանքները կազմակերպում է իրեն սահմանված լիազորությունների շրջանակներում :

2019 թվականի ընթացքում հրավիրվել է ավագանու 10 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքին վերաբերվող մի շարք հարցեր և դրանց վերաբերյալ ընդունվել համապատասխան որոշումներ:

Ընդունված որոշումների կատարման մասին իրազեկվել է համայնքի ազգաբնակչությանը: Անցած տարվա ընթացքում համայնքի ղեկավարին տարբեր հարցերով դիմել են շուրջ 30 քաղաքացիներ, որոնց պահանջներին տրվել են համապատասխան լուծումներ:

537 քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ:

Գյուղատնտեսության բնագավառ

2019 թվականի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման,բարձր բերքի ապահովման ուղղությամբ: 2019թ վականի ընթացքում Նորապատի համայնքապետարանը պատվիրել է ագրոքիմիական բաղադրության ճշտման և հողի նկատմամբ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով նոր քարտեզ և իրազեկել համայնքի հողօգտագործողներին:
Գարնանը ժամանակին կազմակերպվել է ջրատարների վերանորոգումը և շուրջ 6կմ դաշտամիջյան ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքները: Համայնքում ոռոգման համակարգի արդիականացման ծրագրերի շրջանակում կառուցվելու է շուրջ 1200մ երկարությամբ նոր կիսախողովակներով ոռոգման համակարգ:

Կենցաղ սպասարկման բնագավառ

Բնակչության կենցաղային հարցերը եղել և մնում են համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Համայնքի տարածքում կատարվում է անվճար աղբահանություն ,որի համար 2019թվականի ընթացքում ծախսվել է 1346,4 հազար դրամ գումար:Աշխատանքներ են տարվում համայնքի նորաստեղծ թաղամասերում ավարտին հասցնելու էլ.էներգիայի մատակարարումը և նոր թաղամասի գազաֆիկացման ուղղությամբ : Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ջրի մատակարարումը համայնքում դարձել է 24 ժամյա:

2019թվականի ընթացքում հարթեցվել և ասֆալտապատվել է շուրջ 15կմ ներհամայնքային փողոցները: Լուսավորվել է ամբողջ համայնքը 300 նոր լեդ սերնդի լուսատուներով:

Մշակույթ և սպորտի բնագավառ

Համայնքապետարանը մշակույթի տան և դպրոցի հետ համատեղ կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ տրամադրելով նաև որոշակի դրամական օգնություն: Համայնքապետարանը իր մշտական աջակցությունն է ցուցաբերում մանկապարտեզում, դպրոցում կազմակերվեպվող միջոցառումներին:
Մանկապարտեզի 28 երեխաներ համար գնվել է դպրոցական պայուսակներ և գրենական պարագաներ:
Համայնքի ղեկավարի և բարերարներ՝ Դինա և Լիա Ղարիբեանների ջանքերով Նորապատի մանկապարտեզի բակում տեղադրվել է մանկական խաղահրապարակ :
Դպրոցի և մանկապարտեզի երեխաներին ամանորի նախաշեմին նվիրվել է ամանորյա տոպրակներ:
Համայնքի ղեկավարի պատրաստակամության և ջանքերի շնորհիվ <<Նորապատի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում բացվել է նոր խումբ :

Սոցիալական բնագավառ

Համայնքապետարանը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու,նրանց դիմումներին ընթացք տալու գործընթացը :
2019թվականի ընթացքում երկու ազատամարտիկների տրամադրվել

են հանգստյան ուղեգրեր : Սպորտային ձեռքբերումների համար դրամական օգնություն է տրամադրվել մեկ մարզիկի:

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Ընթացիք տարում պաշպանության կազմակերպման բնագավառում իրականացվել են մի շաք միջոցառումներ:Սահմանված կարգով համայնքապետարանը համագործակցել է տարածքային զինկոմիսարիատի հետ,նպաստել զորակոչին:
Համայնքի զինապարտների գրանցամատյանում կատարվել է լրացումներ; Համայնքապետարանը աջակցել է համայնքի երիտասարդությանը ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: 2019թվականի ընթացում համայնքից ՀՀ բանակ են զորակոչվելու հինգ երիտասարդներ:

Համայնքային բյուջեյի իրագործում

Բյուջեյի կատարման գործընթացը մշտապես եղել է համայնքի ղեկավարի առաջնահերթ ուշադրության կենտրոնում:
2019թվականի ընթացքում հավաքագրվել է հողի հարկ՝5064,1 հազար դրամ,գույքահարկ ՝ 11528,8 հազար դրամ:
Աշխատակիցները սահմանված կարգով օգտվում են իրենց սահմանված արձակուրդներից:

Համայնքի հիմնախնդրիները

1.Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում
2.Մշակույթի տան շենքի նորոգում
3.Զբոսայգու բարեկարգում
4.Նոր թաղամասում գազաֆիկացման և ջրամատակարարման անցկացում համակարգի անցկացում:
5.Նորապատ համայնքը H17 հանրապետական նշանակության ճանապարհին միացնող հատվածի հիմնանորոգումը:
Նորապատ համայնքի ազգաբնակչությունը համայնքապետ՝ Վ. Խաչատրյանի գլխավորությամբ իրենց խորին շնորհակալությունն են հայտնում մարզպետ պարոն՝ Հ. Մաթևոսյանին համայնքի կողմից բարձրացված խնդիրներին լուծում տալու համար և լի են վճռականությամբ համայնքի առջև ծառացած խնդիրները կյանքի կոչելու ուղղությամբ:

Նորապատ համայնքի ղեկավար՝ Վ.Խաչատրյան